



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ 0721/02//2009թ.
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
Դատավորներ՝ Գ.Արզումանյան
Կ.Սաղյան

Քաղաքացիական գործ թիվ 0721/02//2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

15 հունիսի 2010թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով

նախագահությամբ դատավոր՝
դատավորներ՝

Զ.Օհանյանի
Կ.Ղարայանի
Գ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում քննելով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 25-ի որոշման դեմ քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Գեղամ Ժորժիկի Եսայանի ընդդեմ Էդուարդ Սողոմոնի Հարությունյանի՝ 14.453.650 (տասնչորս միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր հիսուն) դրամ բռնագանձելու պահանջի մասին հայցվոր Գ.Եսայանի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի կողմից նարկայացրած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Գեղամ Եսայանը հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Էդուարդ Սողոմոնի Հարությունյանի՝ 14.453.650 (տասնչորս միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր հիսուն) դրամ բռնագանձելու պահանջի մասին:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. դեկտեմբերի 07-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 3.669.271 /երեք միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր յոթանասունմեկ/ դրամի չափով:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 25-ի որոշմամբ հայցվոր Գ.Եսայանի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ պատասխանող Է.Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարվել: Ամբողջությամբ բեկանվել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 07.12.2009թ. վճիռը և Գ.Եսայանի հայցը մերժվել ամբողջությամբ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշման դեմ 26.04.2010թ. նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով վճռաբեկ բողոք է բերել հայցվոր Գ.Եսայանի ներկայացուցիչ Ա.Թարխանյանը:

23.04.2009թ. վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննված է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոնշյալ հիմնավորումներով.

1. Դատարանը չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 49-րդ, 50-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր: Միայն է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասը:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Գործով ձեռք բերված տեղեկություններով՝ Ստեփանակերտի քաղաքապետի որոշմամբ, շինարարության թույլտվությամբ, պայմանագրի, դատական նիստի արձանագրության պատճեններով հաստատված է, որ Գ.Եսայանը և Է.Հարությունյանը համատեղ հիմնադրած «Ֆլամինգո-Պլուս» ՍՊԸ գործունեությունն ապահովելու և շահույթ ստանալու նպատակով Է.Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների փողոցի թիվ 28 հասցեում գտնվող շինության և հարակից տարածքի վրա շինարարական աշխատանքներ իրականացնելու համար ներդրել են որոշակի գումարներ, ու դատաշինարարատեխնիկական փորձագետի եզրակացությամբ այդ աշխատանքների արժեքը կազմում է 12.128.081 դրամ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2008թ. նոյեմբերի 10-ի դատական նիստի արձանագրությունից երևում է, որ պատասխանողն ընդունել է «...7.300 դոլար ես եմ ծախսել այդ շինության վրա, իսկ մնացածը՝ Գեղամը... Իմ կարծիքով ծախսվել է 20-25 հազար դոլար...» «Սարմա» ՍՊԸ-ի կողմից 18.03.2010թ. թիվ 1 տեղեկանքի համաձայն՝ վիճելի շինարարական աշխատանքները կատարվել են ընկերության կողմից Գ.Եսայանի պատվերով:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը, անտեսելով գործով ձեռք բերված վերը նշված տեղեկությունների առկայությունը, փաստում է, որ հայցվորը չի ապացուցել՝ պատասխանողին պատկանող շինությունում իր կողմից երբ, ինչպիսի և ինչ արժեքով շինարարական աշխատանքներ են կատարվել: Վերլուծելով դատարանի դիրքորոշումը՝ կարելի է եզրակացնել, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել: Ընդհանրապես գնահատման առարկա չի դարձրել փորձագետի եզրակացությունը:

Դատարանն անհիմն է համարում հայցվորի այն պնդումն, ըստ որի՝ պատասխանողն ընդունել է հայցվորի կողմից հայցագնի չափով շինարարական աշխատանքներ կատարելու հանգամանքը և արձանագրում է, որ ինչպես սույն գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատական քննության ժամանակ, այնպես էլ վերաքննիչ բողոքում պատասխանողը չի ընդունել հայցապահանջը, ավելին՝ նա չի ընդունել ոչ միայն հայցագնի չափով հայցվորի կողմից շինարարական աշխատանքներ կատարելու, այլև՝ հայցադիմումում նշված հանգամանքների առկայությունը ԼՂՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքով սահմանված կարգով հայցվորի կողմից ապացուցելու հանգամանքը: Հիմնվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի վրա, դատարանը նշում է, որ դատարանի համար հայցվորի կողմից շինությունում որոշակի շինարարական աշխատանքներ կատարելու փաստը պատասխանողի կողմից ընդունելու հանգամանքը ոչ միայն չի կարելի դիտարկել իբրև հայցի հիմքում ընկած փաստի ընդունում, այլև պարտադիր չէ դատարանի համար:

Փաստորեն, ԼՂՀ վերաքննիչ դատարանը հանգելով այն հետևության, որ հիմնավոր է կիրառման ենթակա ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետը չկիրառելու մասին բողոքի հիմքը, բայց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չհետազոտելով գործով ձեռք բերված ապացույցները անհիմն մերժել է հայցը:

2. Ստորադաս դատարանները չեն կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Օրենքի նշված նորմը կիրառելի էր, քանի որ Ստեփանակերտի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող տարածքում Գ.Եսայանը կատարել է շինարարական աշխատանքներ, պատասխանողի խնդրանքով: Հետևաբար գործարքի անվավերության հետևանքով Գ.Եսայանը կրել է 4.623.810 դրամի չափով վնաս:

Բողոքում նշվում է նաև, որ բարձրացված հարցի վերաբերյալ ԼՂՀ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռը և ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումը հակասական են ու գտնում է, որ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը առաջացրել է ծանր հետևանքներ՝ հայցվորը ներդնելով մեծ չափով գումարներ, որպեսզի ծավալի տնտեսական գործունեություն, ոչ միայն զրկվել է իր կողմից ստեղծածից, այլ նաև անհիմն զրկվել է իր հատուցման իրավունքից, այն դեպքում, երբ պատասխանողը ընդունում է այդ աշխատանքների կատարումը: ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշմամբ հայցվորը զրկվել է 11.943.081 դրամի չափով գումարից:

Բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 25-ի որոշումը և այն փոփոխել՝ պատասխանողից հոգուտ իրեն բռնագանձել 11.943.081 դրամ և վճարված պետական տուրքի գումարը:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Վճռաբեկ բողոքին պատասխան ներկայացրած անձը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Նա գտնում է, որ ստորադաս դատարանը բողոքարկվող որոշմամբ նյութական նորմեր չի խախտել, իսկ բողոք բերողը ոչ մի կերպ չի հիմնավորել բողոքում թե կոնկրետ, որն է դատարանի թույլ տված խախտումը, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները:

Վ.Հայրապետյանը խնդրել է վճռաբեկ բողոքը մերժել ամբողջությամբ և օրինական ուժ տալ բողոքարկվող որոշմանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. Գեղամ Եսայանը և Էդուարդ Հարությունյանը համատեղ հիմնադրած «Ֆլամինգո-Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեությունն ապահովելու և շահույթ ստանալու նպատակով Էդուարդ Հարությունյանին սեփականության

իրավունքով պատկանող Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցներ փողոցի թիվ 28 հասցեում գտնվող շինության և հարակից տարածքի վրա շինարարական աշխատանքներ իրականացնելու համար ներդրել են որոշակի գումարներ: Ընդ որում, 7.300 ԱՄՆ դոլար ներ է դրվել Է.Հարությունյանի, իսկ մնացածը՝ Գ.Եսայանի կողմից:

2.Կողմերը 05.07.2004թ. կնքած պայմանագրի համաձայն համատեղ հիմնադրել են «Ֆլամինգո-պլյուս» ՍՊԸ-ն:

3.«Ֆլամինգո-պլյուս» ՍՊԸ-ի գործունեությունը ապահովելու համար հայցվորը պատասխանողի սեփականությունը հանդիսացող Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների 28 հասցեում գտնվող 93.61 քմ մակերեսով շինության տարածքի վրա իրականացրել է շինարարական աշխատանքներ՝ անբաժանելի բարելավումներ:

4. Դատաշինարարատեխնիկական փորձագետի հմ 7913.09 առ 18.09.2009թ. եզրակացության համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների 28 հասցեում գտնվող Էդուարդ Հարությունյանի սեփականություն հանդիսացող շինության և կից տարածքի վրա կատարված շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը 2003թ. գործող շուկայական գներով գումարային արտահայտությամբ կազմում է 12.128.081 դրամ, իսկ նույն հասցեում գտնվող Էդուարդ Հարությունյանի սեփականություն չհանդիսացող հողամասի վրա կատարված շինարարական աշխատանքների և նյութերի արժեքը 2003թ. գործող շուկայական գներով գումարային արտահայտությամբ կազմում է 4.623.810 դրամ:

5. ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2008թ. նոյեմբերի 27-ի օրինական ուժի մեջ մտած վճռով Գեղամ Եսայանի և Էդուարդ Հարությունյանի միջև 2004թ. հուլիսի 05-ին կազմված պայմանագիրը համարվել է անվավեր և չեղյալ: Դատարանը չի անդրադարձել առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման հարցին, պատճառաբանությամբ, որ «հայցվորը նման պահանջ չի ներկայացրել»:

6. ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. փետրվարի 27-ի օրինական ուժի մեջ մտած վճռով «Ֆլամինգո-Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը վտարվել է Էդուարդ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունից:

7. Գ.Եսայանի կողմից շինության տարածքն ազատելուց հետո և փորձաքննություն կատարելուց առաջ՝ 2009թ. մայիս ամսին, Է.Հարությունյանը կատարել է 185.000 դրամի չափով շինարարական աշխատանքներ:

8. «Սարմա» ՍՊԸ-ի կողմից 18.03.2010թ. թիվ 1 տեղեկանքի համաձայն՝ վիճելի շինարարական աշխատանքները կատարվել են ընկերության կողմից Գ.Եսայանի պատվերով:

4. ԼՂՀ Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

1.Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով մասնակի հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Գործով հաստատված է, որ Գեղամ Եսայանը և Էդուարդ Հարությունյանը համատեղ հիմնադրած «Ֆլամինգո-Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեությունն ապահովելու և շահույթ ստանալու նպատակով Էդուարդ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցներ փողոցի թիվ 28 հասցեում գտնվող շինության և հարակից տարածքի վրա շինարարական

աշխատանքներ իրականացնելու համար ներդրել են որոշակի գումարներ: Ընդ որում, 7.300 ԱՄՆ դոլար ներ է դրվել Է.Հարությունյանի, իսկ մնացածը՝ Գ.Եսայանի կողմից:

Կողմերը 05.07.2004թ. կնքաց պայմանագրի համաձայն համատեղ հիմնադրել են «Ֆլամինգո-պլյուս» ՍՊԸ-ն:

«Ֆլամինգո-պլյուս» ՍՊԸ-ի գործունեությունը ապահովելու համար հայցվորը պատասխանողի սեփականությունը հանդիսացող Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների 28 հասցեում գտնվող 93.61 քմ մակերեսով շինության տարածքի վրա իրականացրել է շինարարական աշխատանքներ՝ անբաժանելի բարելավումներ:

Դատաշինարարատեխնիկական փորձագետի հմ 7913.09 առ 18.09.2009թ. եզրակացության համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների 28 հասցեում գտնվող Էդուարդ Հարությունյանի սեփականություն հանդիսացող շինության և կից տարածքի վրա կատարված շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը 2003թ. գործող շուկայական գներով գումարային արտահայտությամբ կազմում է 12.128.081 դրամ, իսկ նույն հասցեում գտնվող Էդուարդ Հարությունյանի սեփականություն չհանդիսացող հողամասի վրա կատարված շինարարական աշխատանքների և նյութերի արժեքը 2003թ. գործող շուկայական գներով գումարային արտահայտությամբ կազմում է 4.623.810 դրամ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2008թ. նոյեմբերի 27-ի օրինական ուժի մեջ մտած վճռով Գեղամ Եսայանի և Էդուարդ Հարությունյանի միջև 2004թ. հուլիսի 05-ին կազմված պայմանագիրը համարվել է անվավեր և չեղյալ: Նշված վճռով հաստատված է համարվել, որ «սույն քաղաքացիական գործով վիճարկվող պայմանագիրը վերոնշյալ պատճառաբանությամբ օրենքի ուժով համարվում է չկնքված և առոչինչ գործարք»: Դատարանը չի անդրադարձել առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման հարցին, պատճառաբանությամբ, որ «հայցվորը նման պահանջ չի ներկայացրել»:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում: Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածը սահմանում է, դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ ու դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Նման պայմաններում Գերագույն դատարանը հիմնավոր է համարում բողոք բերողի այն փաստարկները, որ դատարանը չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում եղած և վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր տեղեկությունները՝ Ստեփանակերտի քաղաքապետի որոշումը, շինարարության թույլտվությունը, պայմանագիրը, դատական նիստի արձանագրությունը, կողմերի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը և օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռը, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Նշված հոդվածի մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, բեկանում է վերանայվող դատական ակտը և բավարարում է վճռաբեկ բողոքն այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքում նշված

փաստարկներն էական են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, և երբ վերանայվող դատական ակտն անհիմն և անօրինական է, և կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

2. Վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Դատարանը գտնում է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետը սույն գործով կիրառելի չէ, քանի որ Է.Հարությունյանի և Գ.Եսայանի միջև վնաս պատճառելու հետևանքով առաջացող պարտավորական իրավահարաբերություն չի ծագել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը, ԼՂՀ Գերագույն դատարանը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու բավարար հիմք է համարում:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գեղամ Եսայանի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 25-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Զ.ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Կ.ՂԱՐԱՅԱՆ

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ